

Մարտիրոս վարդապետն զնացեալ անդ եւ հազիւ կ'եւ-  
լանէ յեկեղեցոյն:

Օրս խապար եկաւ ի տօնանմայէն թէ ԳՌ և ԵԾ  
յէնկիւնէրի փախեալ եղեն ի տօնանմայէն, եւ ոչ գի-  
տեմք ո՛ւր<sup>1)</sup> զնացին:

Եւ առաւօտուս ԴՂԻ (18 Յոննիս) թագաւորն ձայ-  
նեալ զղայմախամն եւ զայլ մեծամեծս իւր եւ խոր-  
հուրդ արարեալ և Ռ յէնկիւնէրի յօգնականութիւն նու-  
ցա ուղարկեալ, և զայն կորեալ յէնկիւնէրոցն զասէմէն  
տվեալ այն տօնանմայի մէջ եղեալ պանդխտոցն հան-  
դերձ պարզեւօք:

Երեկոյիս Թագէոս<sup>2)</sup> վարդապետն ի մեր ժամն  
եկաւ:

ԵՂԻ օրս (19 Յոննիս) ըսկսան սէֆէրլուքն պատ-  
րաստիլ որպէս զի զնացեն և պատերազմին ընդ Ֆը-  
ռանգս, զի բանս ասացին անյարմար և անդէպ. բայց  
այգուցս (20 Յոննիս) զիսկն և զստոյզն լւաք՝ թէ գնա-  
լոց են ի Պօղազն, և Ֆռանգն ի դուրսն է ելեալ, ի մի  
տեղ հանգեալ որ ասի Էսկի Ըստամպօլ, եւ երբ ետես  
զՏաճիկսն որ եկին ի Պօղազն, ինքն անտի ելեալ զնաց  
այլ ի վար, ևս Տաճիկքն զայն տեսեալ՝ զնացեալ իւ-  
րեանքն, հանգեալ ի տեղն յորում Ֆռանգքն հանգեալ  
էին յեռանդին: Եւ Ֆռանգն արձակեալ մի գեսպան  
հանդերձ նաւովք երկուսի, և եկեալ առ սոսա խօսե-  
ցեալ բանս, եւ խօսքն յերկարեալ նախատելով զմի-  
մեանս: Եւ մինչ ի ժամս պարզեղ քամի էր, որ Տա-  
ճիկքն յայն կոյս զնացին եւ ի տեղն հանգեան, եւ  
յայսմ ժամ որում խօսեցան ընդ միմեանս, եւ Տա-  
ճիկքն ոչ համբերեալ՝ մի թօփ արձակեալ նոցա, եւ  
նոքա այլ սոցա: Եւ ի ժամուս յայս ելանէ մի հողմ  
անդուստ, որ ասի լօտօս, եւ Ֆռանգքն պատրաստ

1) որ.

2) Թագէոս.